ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.08.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2018/112

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 30.07.2018թ. թիվ 03/26-3/13725-18 գրությամբ «Էլիտ Հիլզ» ՍՊԸ (ՀՎՀՀ 04421922) և «Ինտերեվրոս-Արգոս» ՍՊԸ (ՀՎՀՀ 02245698) կոնսորցիումին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 26.07.2018թ. թիվ ԴՎԱ/2754 գրության հիման վրա, 30.07.2018թ. նախաձեռնել է «Էլիտ Հիլզ» ՍՊԸ (ՀՎՀՀ 04421922) և «Ինտերեվրոս-Արգոս» ՍՊԸ (ՀՎՀՀ 02245698) կոնսորցիումին (այսուհետ՝ նաև Կոնսորցիում) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 26.07.2018թ. թիվ ԴՎԱ/2754 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՇՁԲ-23/1» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգում «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ն /կոնսորցիումի պայմանագիր «Ինտերեվրոս-Արգոս» ՍՊԸ-ի հետ/ գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է ընտրված մասնակից:

Քաղաքացի Սարմեն Աղաջանյանի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 06.06.2018թ. ներկայացվել է բողոք, որով բողոքարկվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՇՁԲ-23/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի վերոնշյալ որոշումը, համարելով, որ մասնակցի կողմից ներկայացված «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող պայմանագիրը չի համարվում նմանատիպ: ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշման համաձայն՝ Սարմեն Աղաջանյանի բողոքը բավարարվել է մասնակի: Ուստի գնահատող հանձնաժողովը՝ հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը, դադարեցրել է «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի հետ պայմանագիրը կնքելու մասին որոշումը և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի համաձայն՝ 19.07.2018թ. որոշում է կայացրել «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ից պահանջել շտկում՝ «մասնագիտական փորձառություն» որակավորումը հիմնավորող փաստաթղթերի կրկին ներկայացում: Սահմանված ժամկետում մասնակիցը անհամապատասխանությունը չի շտկել և գնահատող հանձնաժողովը՝ հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, որոշեց «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ից հայտը մերժել»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Արտյոմ Համբարյանը:

3. «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի և «Ինտերեվրոս-Արգոս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը դիմել է «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ին և «Ինտերեվրոս-Արգոս» ՍՊԸ-ին՝ վերջիններիս հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.07.2018թ. թիվ 03/26-3/13725-18 գրությամբ Բողոքներ քննող անձի մոտ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Կոնսորցիումի գրավոր կարծիքը, սակայն վերջիններիս կողմից որևէ գրավոր կարծիք չի ներկայացվել:

Ընկերությունները պատշաճ ծանուցվել են Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն վերջիններիս կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

4. ՍՑ-ԷՍ-2018/112 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 30.07.2018թ. թիվ 03/26-3/13725-18 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ պաշտպանության նախարարությունը 26.07.2018թ. թիվ ԴՎԱ/2754 գրությունը, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՇՁԲ-23/1» գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՇՁԲ-23/1» ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 01.06.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 6 և 19.06.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 7 արձանագրությունները, «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի և «Ինտերեվրոս-Արգոս» ՍՊԸ-ի կոնսորցիումի կողմից ներկայացված հայտը, Բողոքներ քննող անձի 27.06.2018թ. ընդունած թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/77 որոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար թռիչքավայրէջքային ուղու նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՇՁԲ-23/1» գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ նաև՝

Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել «Էլիտ Հիլզ» ՍՊԸ և «Ինտերեվրոս Արգոս» ՍՊԸ կոնսորցիումը (այսուհետ՝ նաև Կոնսորցիում):

Հրավերով սահմանվել է, որ Ընթացակարգի գնման առարկա են հանդիսանում «Վազքուղիների հարթեցման աշխատանքները, այդ թվում՝ թռիչքավայրէջքային ուղղու նորոգման (ճաքերի վերանորոգման) աշխատանքները)», որի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսվել են հետևյալ աշխատանքների տեսակները.

- ճաքերի մաքրում կոմպրեսորով,
- ճաքերի լվացում,
- ավազով վիբրոխտացում,
- ավազի տոգորում ցեմենտային շաղախով,
- ճաքերի լցոնում ակրիլ պոլիմերային մածուկով,
- շինաղբի բարձում և տեղափոխում:

-բոլոր աշխատանքների իրականացումը օդանավակայանային վաշտի մասնագետների ներկայությամբ:

Նույն հրավերով նախատեսված աշխատանքների կատարման համար լիցենզիա չի պահանջվում:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՇՁԲ-23/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 2.5 կետի 1-ին ենթակետի համաձայն՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ նույն հրավերով սահմանված առավելագույն գնի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի նույն հրավերով սահմանված առավելագույն գնի քսան տոկոսից:

բ. նույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Նույն կետի համաձայն՝ նույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում համարվում վազքուղիների հարթեցման, ճանապարհային վերանորոգման և ասֆալտապատման աշխատանքների կատարված լինելը (շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները):

Հանձնաժողովը 06.04.2018թ. ժամը 11:30-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրության 3.1 կետով արձանագրել է, որ «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ն (կոնսորցիում «Ինտերեվրոս Արգոս» ՍՊԸ-ի հետ) գնային առաջարկը կազմել է 9,744,000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ), և նույն արձանագրության 4.1 կետով Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել Կոնսորցիումին:

Նույն արձանագրության 4.2 կետով Հանձնաժողովը որոշել է առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՇՁԲ-23/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Որպես նախկինում պատշաճ կատարված նմանատիպ պայմանագրեր, Կոնսորցիումը Հանձնաժողովին է ներկայացրել հետևյալ պայմանագրերը՝

• ՀՀ պաշտպանության նախարարության հետ 20.12.2016թ. կնքված «Կապալային աշխատանքների» N ԲԸՀԱՇՁԲ-10/1-2 գնման պայմանագիրը (գնման առարկա՝ Երևանի 24236 զորամասում ՈՒԳԱ գումարտակի զորանոցային մասնաշենքի վերակառուցման աշխատանքներ, ծավալը գումարային արտահայտությամբ՝ 151,582,002 ՀՀ դրամ ընդհանուր գնով): Նշված պայմանագրի ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված աշխատանքները ի թիվս այլոց, ներառում են հետևյալ առանձին տեսակի աշխատանքները՝ ասֆալտբետոնե ծածկույթի վնասված հատվածների քանդում փոսային նորոգման համար 150քմ, 8սմ հաստությամբ, հատակի բետոնե մակերևույթի և անցքերի վերականգնում B-7.5 դասի բետոնով, ասֆալտբետոնե ծածկույթի քանդում 10 սմ հաստությամբ, ճանապարհի երկշերտ ծածակույթի վերևի շերտի պատրաստում, բարձված գրունտի տեղափոխում:

• «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի հետ 14.04.2015թ. կնքված «Կապալային աշխատանքների կատարման» ՈԳՊՄԻ-ԲԸԱՇՁԲ-2016/1 գնման պայմանագիրը (գնման առարկա՝ հիմնադրամին պատկանող մշակույթի վարժարանի ննջարանային մասնաշենքի մի մասը վերակառուցելու, ձևափոխելու բնակելի սենյակների և մասնաշենքերի վերանորոգման և ջեռուցման համակարգերի վերափոխման աշխատանքների ձեռքբերումը՝ 42,999,000 ՀՀ դրամ ընդհանուր գնով): Նշված պայմանագրի ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված աշխատանքներն ի թիվս այլոց ներառում են հետևյալ առանձին տեսակի աշխատանքները՝ անցքերի լցափակում թեթև բետոնով: բացի այդ, նույն պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 10.04.2017թ. կնքված է N2 համաձայնագրի տեխնիկական բնութագրում ևս նախատեսվել է առանձին տեսակի ասֆալտապատման աշխատանք:

Հանձնաժողովը 01.06.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 6 արձանագրության 1.1 կետով արձանագրել է, որ Կոնսորցիումի՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՇՁԲ-23/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին իր տվյալների համապատասխանությունը հավաստող փաստաթղթերն առկա են և համապատասխանում են ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

Նույն արձանագրության 1.2 կետով Հանձնաժողովը որոշել է «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի որակավորման չափանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՇՁԲ-

23/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջներին, վերջինիս հայտարարել ընտրված մասնակից և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

Հանձնաժողովը նույն արձանագրության 1.3 կետով որոշել է հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՇՁԲ-23/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ հրապարակել է այն:

Քաղաքացի Սարմեն Աղաջանյանը Բողոքներ քննող անձին 06.06.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել էր, որ «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ն (կոնսորցիում «Ինտերեվրոս Արգոս» ՍՊԸ-ի հետ) կողմից ներկայացված՝ նախկինում կատարված պայմանագրերը չեն հանդիսանում նմանատիպ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՇՁԲ-23/1» գնանշման հարցման ընթացակարգի իմաստով, ուստի Կոնսորցիումի հայտը Հանձնաժողովի կողմից պետք է մերժվեր՝ հրավերով սահմանված պահանաջներին չհամապատասխանելու հիմնավորմամբ, մինչդեռ այն գնահատվել է բավարար և Կոնսորցիումը ճանաչվել է Ընթացակարգի ընտրված մասնակից: Բողոքաբերը Բողոքով պահանջել է չեղյալ համարել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար թռիչքավայրէջքային ուղու նորոգման աշխատանքների ձեռքբերման «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՇՁԲ-23/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի 01.06.2018թ. ժամը 11:00 կայացած նիստի N 6 արձանագրությամբ կայացված՝ «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի (կոնսորցիում «Ինտերեվրոս Արգոս» ՍՊԸ-ի հետ) հետ պայմանագիր կնքելու մասին որոշումը և կասեցնել պայմանագրի կնքման գործընթացը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Նույն մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 61-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1)հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը, որպես նույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Կարգի 65-րդ կետի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները:

Օրենքի 34-րդ հոդվածի՝

• 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

• 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

• 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

Ուսումնասիրելով Կոնսորցիումի կողմից ներկայացված՝ նախկինում կատարված ՈԲԸԱՇՁԲ-10/1-2 և ՈԳՊՄԻ-ԲԸԱՇՁԲ-2016/1 գնման պայմանագրերը, Բողոքներ քննող անձը գտել է, որ թեև նշված պայմանագրերով նախատեսված են եղել առանձին տեսակի ասֆալտապատման աշխատանքներ, այդուհանդերձ, նշված պայմանագրերը չեն կարող հանդիսանալ համանման (նմանատիպ) գործարքներ, քանի որ Ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում վազքուղիների հարթեցման, ճանապարհային վերանորոգման և ասֆալտապատման աշխատանքների կատարված լինելը, մինչդեռ ներկայացված պայմանագրերով գնման գործարքներ հանդիսացել են համապատասխանաբար՝ Երևանի 24236 զորամասում ՈՒԳԱ գումարտակի զորանոցային մասնաշենքի վերակառուցման և «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամին պատկանող մշակույթի վարժարանի ննջարանային մասնաշենքի մի մասը վերակառուցելու, ձևափոխելու բնակելի սենյակների և մասնաշենքերի վերանորոգման և ջեռուցման համակարգերի վերափոխման աշխատանքների կատարման պայմանագրերը:

Բողոքներ քննող անձը գտել է նաև, որ Հանձնաժողովը՝ Կոնսորցիումի հայտը բավարար գնահատելով և վերջինիս ընտրված մասնակից ճանաչելով՝ գործել է ոչ իրավաչափ՝ խախտելով Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, 6-րդ մասով, Կարգի 61-րդ, 65-րդ, ինչպես նաև Հրավերի 2.5 կետով սահմանված պահանջները:

Նկատի ունենալով, որ Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման ուժի մեջ մտնելու օրը, և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ Բողոքներ քննող անձը որոշել է քաղաքացի Սարմեն Աղաջանյանի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 06.06.2018թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի և պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել՝ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար թռիչքավայրէջքային ուղու նորոգման աշխատանքների ձեռքբերման «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՇՁԲ-23/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի 01.06.2018թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի N 6 արձանագրությամբ կայացված՝ «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի (կոնսորցիում «Ինտերեվրոս Արգոս» ՍՊԸ-ի հետ) հետ պայմանագիր կնքելու մասին որոշումը դադարեցնելու մասին համապատասխան որոշում:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ Բողոքներ քննող անձը հաշվառում է իր կողմից ընդունված որոշումները և դրանց կատարման նկատմամբ իրականացնում է հսկողություն:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի ընդհանուր ժողովի 21.04.2017թ. N 1 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհրդի գործունեության» կարգի 52-րդ կետի համաձայն՝ Խորհրդի կողմից ընդունված որոշման կատարման մասին տեղեկատվությունն՝ այդ որոշման հրապարակման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն գրավոր ներկայացնում է խորհրդին:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 25.07.2018թ. Բողոքներ քննող անձ Է. Սարգսյանին ուղղված թիվ ԴՎԱ/2737 գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՇՁԲ-23/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 27.06.2018թ. թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/77 որոշումը, 19.07.2018թ. դադարեցրել է ընթացակարգի հանձնաժողովի 01.06.2018թ. ժամը 11:00 տեղի ունեցած նիստի N 6 արձանագրությամբ կայացված՝ «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի (կոնսորցիում «Ինտերեվրոս Արգոս» ՍՊԸ-ի հետ) հետ պայմանագիր կնքելու մասին որոշումը՝ կից ներկայացնելով Հանձնաժողովի 19.07.2018թ. նիստի թիվ 7 արձանագրությունը:

Նշված արձանագրության 2.1 կետով Հանձնաժողովն արձանագրել է հետևյալը. «Քանի որ մասնակցի «մասնագիտական փորձառություն» որակավորումը հիմնավորող պայմանագիրը ԳԲԽ-ԷՍ-2018/77 որոշման համաձայն չի հանդիսանում նմանատիպ, ուստի գնահատող հանձնաժողովը 19.07.2018թ. որոշում է կայացրել «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ից պահանջել շտկում՝ «մասնագիտական փորձառություն» որակավորումը հիմնավորող փաստաթղթերի կրկին ներկայացում: Սահմանված ժամկետում մասնակիցը շտկումը չի ներկայացրել, ուստի գնահատող հանձնաժողովի կողմից «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

Ընթացակարգի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը նշեց, որ «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ին (կոնսորցիում «Ինտերեվրոս Արգոս» ՍՊԸ-ի հետ) տվյալները՝ համապատասխան հիմքերով, Պատվիրատուի կողմից ուղարկվել են լիազորված մարմին՝ կոնսորցիումին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելու համար, մասնակցի «մասնագիտական փորձառություն» որակավորումը հիմնավորող պայմանագրերը Բողոքներ քննող անձի ԳԲԽ-ԷՍ-2018/77 որոշման համաձայն նմանատիպ չհամարվելու հիմնավորմամբ վերջինիս հայտը մերժելու արդյունքում: Բողոքներ քննող անձի այն հարցին, թե արդյո՞ք Հանձնաժողովի կողմից նշված անհամապատասխանությունն արձանագրվելուց հետո Հանձնաժողովի քարտուղարը, Կարգի 47-րդ կետի համաձայն՝ ծանուցել է Կոնսորցիումին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել

արձանագրված անհամապատասխանությունը, Պատվիրատուի ներկայացուցիչը պատասխանեց, որ Հանձնաժողովի նիստը չի կասեցվել և նման ծանուցում Կոնսորցիումին չի ուղարկվել:

Կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.
- 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.
- 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ նույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

- 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին:
- 46-րդ կետի համաձայն՝ նույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:
- 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

• 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՇՁԲ-23/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի՝

•7.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան:

• 7.13 կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ նույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը: Նույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով սույն հրավերի 1-ին մասի 7.13-ից 7.21-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

• 7.20 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված, ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված, որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ

անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում, ծանուցմանը պարտադիր կցվում է հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը, որում պարտադիր և մանրամասն պետք է նկարագրված լինեն գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները:

• 7.21 կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով սույն հրավերի 1-ին մասի 7.13-ից 7.20-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

Օրենքի 6-րդ հոդվածի՝

•1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

• 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- Կոնսորցիումի հայտը Հանձնաժողովի կողմից մերժվել է այն հիմնավորմամբ, որ վերջինիս «մասնագիտական փորձառություն» որակավորումը հիմնավորող պայմանագիրը բողոքներ քննող անձի 27.06.2018թ. ԳԲԽ-ԷՍ-2018/77 որոշման համաձայն չի հանդիսացել նմանատիպ:

- Պատվիրատուի ներկայացուցչի խոսքով՝ Հանձնաժողովի կողմից նշված անհամապատասխանությունն արձանագրվելուց հետո Հանձնաժողովի քարտուղարը չի ծանուցել Կոնսորցիումին՝ մեկ աշխատանքային օրով կասեցնելով նիստը և առաջարկելով նույն ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

- Պատվիրատուի կողմից՝ Կոնսորցիումին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելու համար լիազորված մարմին ուղարկված հիմքերում բացակայում է համակարգի միջոցով Կոնսորցիումին ուղարկված համապատասխան ոչ ավտոմատ ծանուցումը՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում արձանագրված անհամապատասխանությունը շտկելու առաջարկով:

- Հանձնաժողովի 19.07.2018թ. նիստի թիվ 7 արձանագրությունը չի պարունակում Կոնսորցիումի կողմից ներկայացված՝ վերջինիս որակավորումը հիմնավորող նախկինում կատարված պայմանագրերի գնահատման արդյունքում Հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունների սպառիչ և մանրամասն նկարագրությունը:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ Հանձնաժողովը՝ 19.07.2018թ. նիստի թիվ 7 արձանագրության մեջ Կոնսորցիումի հայտի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների սպառիչ և մանրամասն նկարագրությունը չներկայացնելով, ինչպես նաև չծանուցելով Ընկերությանը և չառաջարկելով վերջինիս մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունը՝ խախտել է Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, Կարգի 47-րդ կետով և Հրավերի 7.20 կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջները՝ ինչի արդյունքում Ընկերությունը զրկվել է

Հրավերի պահանջներին չհամապատասխանող գնահատված փաստաթղթի շտկված տարբերակը Հանձնաժողովին ներկայացնելու հնարավորությունից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի և «Ինտերեվրոս-Արգոս» ՍՊԸ-ի կոնսորցիումին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.07.2018թ. թիվ 03/26-3/13725-18 գրությամբ «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 04421922) և «Ինտերեվրոս-Արգոս» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 02245698) կոնսորցիումին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**